



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՍՏՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽՍՎՈՐ ՎՃԱՐՁՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆՎՈՐԱ-ԳՑՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Վ. ԹԱԹԻԿՅԱՆ

ԿՈՆԽՈՋԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊԻԵՍ 3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ
(Գյուղական բեմերի համար)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1911

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

Վ. ՔԱՅԻԿՅԱՆ

ԿՈՆԽՈՋԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հակահրոնական պիես 3 գործողությամբ
(Չյուդական բեմերի համար)

A $\frac{II}{38673}$

16095

ՄԱՍԻՆՈՒՄՆԵՐԸ



Հրատ. № 1213

Գրառ. № 3052(բ). Տիրաժ - 3000. Պատ. № 241

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. Սեֆև—միջակ գյուղացի (անգր.)	55 տար.
2. ՎԱՐԳՈՒՇ - Սեղուի կինը (անգր.)	50 »
3. ՊԱՂՏՈ—Սեղոյի վորդին (անկուս. անգր.)	30 »
4. ՍԱՐԳԻՍ—Սեղուի վորդին (կոմյեր. գրագ.)	19 »
5. ՄԱՐՈ—Սեղուի աղջիկը (անգր.)	25 »
6. ՄԿՈ—չքավոր գյուղացի (անգր.)	50 »
7. ՀԱՄՈ—կուլակ, Սեղուի դրկից (գրագ.)	50 »
8. ՀՈՒՓ—Համուի կինը (անգր.)	40 »
9. ՎՈՒՄ—Համուի բատրակը (գրագ.)	16 »
10. ՀՈՒՍԻԿ—գյուղի տերտերը	50 »
11. ՀՆՐՈ—գյուղատնտես	30 »
12. Գյուղացիներ, կոմյերիտներ, պիոներներ և այլք:	
13. Մի հավատացյալ գյուղացի	45 »
14. Մի պառավ հավատացյալ կին	50 »

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քեմը ներկայացնում է Սեղոյի տան սենյակներից մեկը, վորն ունի մի լուսամուտ, յերկու դուռ: Սենյակի աջ կողմում կա մի սեղան, վորի վրա դրված է մի հայելի, իսկ ծախ կողմում մի թախտ, մի սեղան, յերեք աթոռ սեղանի շուրջը, յեմ պատից կախված են մի գորգ ու զանազան նկարներ:

Ա. ՊԱՏԿԵՐ

Վարագույրը բացվում է, Սեղոն ձնկաչոփ յեկած քախսին՝ կոնդի վրա մանգաղի կոր է պատաստում:

Սեֆև. — (Ինքնիբեց) Գնանք, բայց վճնց գնանք... ինչի՞ հրմար... քաղաքում ապրելն ել հեշտ բան չի, պետք ա գիտուն մարդ ըլես, վոր հաց ուտես: Չե, Վարդուշը սխալվում ա, դիտիցը դուրս ա տալի, նա չի հասկանում քաղաքի դժվարութենը: Գիտուն վոր չըլես, պետք ա լսվ ուստա ըլես, վոր հալսլ հաց ուտես:

ՎԱՐԴՈՒՇ.—(Ներս և Տնեղալ, Սեղոյին) Այ՛ մարդ, լսի՛, ես քան
տարի լա՛ առավոտից մինչ իրիկուն աշխատում եմք,
ելի մեկը երկուս չեղավ, դնանք քաղաք, յա՛ բախտ...

ՍԵՂՈ.—Այ կնիկ, քառսուն տարի լաման եր մեր հալը, վճնց
դիմացանք ..

ՎԱՐԴՈՒՇ.—Շների պես, վճնց...

ՍԵՂՈ.—Ե՛ն ա, ելի, վոր փեսեդ ենտեղ ա աշխատում, հենց դի-
տես նա յա մեզ հաց կերցնելու. թե են աղչկանդ շատ
ես սիրում, մեկ-մեկ քաղաք դնա ու տես:

ՎԱՐԴՈՒՇ.—Ձեմ իմանում, իմ խելքը վնչ մի բանի տեղ չի ա-
նում:

ՍԵՂՈ.—Հըլա՛ միքիչ ել համբերի, ի՛նչ եյիր ուզում միքանի
տարում, ելի եսքանին փառք տու, վոր ազատվել
ենք խմբապետների թալանից ու չարչիների ձեռից:

ՎԱՐԴՈՒՇ.—Դրճուտ ա, են տաճիները եդ կողմից վատ եյին,
են մի կողմից լավ եյին, վոր սուրբ որերը պահում
եյին:

ՍԵՂՈ.—Դու հիշճում ես, թե Մկրտնց Սարգսի գլխին ի՛նչ ոյլն
բերեց գեղի ստարշին ենոր հըմար, վոր երկու որ
ուշացրել եր տասը մանեթ պարտքը:

ՎԱՐԴՈՒՇ.—(Հեթաբերուքյամբ) Ապա մի պատմի տենանք, յեա
մտահան եմ արել:

ՍԵՂՈ.—Են Սարգսին բանտ նստացրեց, գիշերը ենենց լաման
թաղել եյին, վոր քթից ու բերնից արին եք գալի:

ՎԱՐԴՈՒՇ.—Յես են եմ ասում՝ վճնց եդ Համոն եղպես գործը
կարգի լա գցել: Մի ջուխտ լեզը երկու ջուխտ արեց,
մի կովը չորս արեց, տան կողքին մի ոթախ ել շի-
նեց, հըլա բատրակ ել ա պահում, վոչխարները շա-
տացնում, ինքն ել խողի պես ուտճում-խմճում, ման ա
գալի:

ՍԵՂՈ.—(Չիբուխը քաշելով) Հե՛յ, հե՛յ, հե՛յ, հո դու ես. աշխրջից
խաբար չունես, նա դաշնակի ժամանակ թալան ա ա-
րել, հըմի ձայնազուրկ ա, նրա արևը մթնում ա:

ՎԱՐԴՈՒՇ.—Դ՛ու յել անեյիր, հըմի մենք ել հարուստ կըլեյինք,
շան պես չեյինք չարչարվի:

ՍԵՂՈ.—Դու հո գիտես, վոր իմ բնութենիս մեջ չկա հարամդա-
ղություն անել, եդ ամեն մարդի գործ չի, հըմի մեր
որը լավանում ա, հասկացա՛ր...

ՄԱՐԳԻՍ.—(Ներս և մտնում քերքեր ու գրքեր քեզի սակից, իցցի-
րեն խոսում է) Միայն աշխատանքով կարելի յե հաս-
նել նպատակի. (դառնալով նրանց) մտքներիցդ հա-
նեք քաղաք գնալը: Ես գեղում հո միայն մենք չենք:
Արդեն քսան չքավոր և միջակ ընտանիք կազմել են
կոլխոզ: Մեղպեսները մնացած չքավորներն հետ կամ
պետք ա շուտով նրանց միանանք և կամ նորը կազ-
մենք:

ՄԵՒՌ.—Սարգիս, համաձայն եմ քեզ հետ, բայց դրա ոգուտը
ինչ՞նչն և ինչնու:

ՎԱՐԳՈՒՇ.—Են, վոր մեր հիմիկվա ունեցածն էլ մեր ձեռից
գնալու չա:

ՄԱՐԳԻՍ.—Այ ասեմ, թե ոգուտը ինչ ա ինչելու: Են, վոր մեզ
նման միջակը ինչքան էլ ուղի տրակտոր, դտիչ և ու-
րիշ մաշինա չի կարող առնի, ուժը չի պատի. իսկ
եռոպս մենակ կկործանվենք, դրա համար պետք ա
նրանց միանանք, կամ նոր կոլխոզ կազմենք: Իսկ
կառավարութունը կոլխոզին շատ ա ոգնում: Որի-
նակ, կարկուտն ու անձրևը փչացնում են, յերաշտը
չորացնում, գնում էք տերտերի մոտ, վոր խաչ ու
խաչվառով դա աղոթք անի: Անցյալ տարի տերտերն
ու տիրացուն շատ-շատ աղոթք արին, բայց ավելի
վատ յեղավ: Կրտության միջոցները միայն կոլխոզը
կարող ա ձեռք բերի և բոլոր ֆեասներից ազատվի: (Գը-
նում նստում է մի անկյունում ու մեֆից կարգում):

ՄԵՒՌ.—(Վարդուեից) Հո լսեցիր, բան հասկացմը, Սարգսի ա-
սածը իմ խելքին տեղ ա անում: Տեսնում ես են կոլ-
խոզը, ունի ամեն տեսակ մաշինա, գործն էլ լավ ա-
ռաջ ա գնում. վոր մի բանից նեղվում ա, կառավա-
րութունը քոմակ ա անում:

ՎԱՐԳՈՒՇ.—(Մեղպիցն՝ ցույց տալով Սարգսից) Եդ թող, հըլմ
դրան մտիկ արա, գիշեր-ցերեկ աչք ա քոռացնում:
Հիմի յել անասոված ա դառել, մեր տունը նոր ա
քանդվելու: Հենց մի բան ա սովորել, լենինը ա-
սում ա՝ «կրոնը հաշիշ ա ժողովրդի համար». լենինը
խելք մարդ ա ելել, նրան բոլորն էլ սիրում են, նա
ուրիշ Ֆորմի անասոված եր, ասում են մեծ բալլեհիկ
ա ելել:

ՍԵՒՈ.—(Մտնեղած) Ա՛յ կնիկ, դրուստ վոր քո խելքը բան չի կտրոււմ, ես աշխրքում են մարդը վոր դալամ բռնեց չի իմանում, նա մարդի սըրա չի կարա մտնի: Ենցարի ու դաշնակի ժամանակն եր, վոր խալիսը մուլի եր: Մարտին թողանք զնա լիկկույան սովորելու:

ՎԱՐԴՈՒՇ.—Եդ մեկը մի ասի, լես քանի սաղ եմ, Մարոն փողոց չի տեսնի, աղջիկ ասածդ վոր փողոց դուրս գա, ել նրա խերը տեսնես, նա կիչանա, են ժամանակ արի գեղացոց բերանը փակի, լես սաղ-սաղ հողը մտնեմ՝ ավելի լավ ա:

ՍԵՒՈ.—Ա՛յ կնիկ, խալիսը բան ա սովորում. տեսնում ես, Մարոյնց Սաթիկը վճնց ա բլբուլի պես խոսում, զբրում ու կարդում: Ապա տղան, են չար Մելիքը՝ մարդ ա դառել, գազեթներում հողվածներ ա գրում, նա լել գրվել ա անաստված խմբակում, շերում կնիթկա ունի:

ՊԱՂՏՈ.—(Շապ գետ վազելով) Ի՞նչ եք նստել, գեղի խալիսը դուրս ա թափվել, վեր կացեք...

ՍԵՒՈ ՅԵՎ ՎԱՐԴՈՒՇ.—(Շօղլված) Ի՞նչ կա, ավազակուլթյա՛ն, մարդասպանությա՛ն, ի՞նչ ա պատահել...

ՊԱՂՏՈ.—Ձե, չե, ապա մի դուրս արիք տեսեք՝ ի՞նչ դագ են բերել քաղաքից. ուստա բանվորներն են շինել համ, յաման խելք ունեն եդ մարդիկ համ, մի զարմանք բան են համ...

ՍԵՒՈ ՅԵՎ ՎԱՐԴՈՒՇ.—(Շապ կանգնելով, հետքերով) Ի՞նչ են բերել, ասա, ելի:

ՊԱՂՏՈ.—Նոր մաշինեք են բերել կոլխոզի հըմար, մեկը են Սե սարի չափ կըլի, ճանաչում եմ, տրակտոր ա, մեկելները չիմացա ինչ են: Ա՛յ, եդ մաշինեքը շինող ուստեքը բոլորն ել անաստված միության անդամ են:

ՍԵՒՈ.—Ա՛յ Պաղտո, ենպես վազդ, շնչակտուր ներս փրթար, են ա՛սացինք՝ աշխարհը անցնում ա. հո մենք, գեղի խալիսը նոր չենք տեսնելու մաշինեք, ես քանի տարի չա՛ տեսնում ենք ու գործածում:

ՊԱՂՏՈ.—Ախր սրանք ավելի մեծ ու ծանր են, ուրիշ զանազան գույների ներկած, և շատ են:

(Այդ ժամանակ Սարգիսը մտնում է նրանց ու ծիծաղում):

ՍԵՂՈ.—(Սարգսին) Հը՛, ինչի՛ լես ծիծաղում, դու տեսն՛լ ես եղ
մաշինեքը:

ՍԱՐԳԻՍ.—Զեմ տեսել, բայց իմանում եյի, վոր նոր մաշինեք
պիտի բերեն կոլտողի համար:

ՍԵՂՈ.—Վճրդիանց ելիր իմանում:

ՍԱՐԳԻՍ.—Կարգացել եյի գաղեթում իրեք որ առաջ:

ՍԵՂՈ.—(Վարդուեին) Հըմի վճնց ելավ. տեսնո՞ւմ ես, գիր կար-
դավ իմացողը աշխրքի ծերից, Հնդստանից խաբար-
ներ ա առնում, աշխրքի բոլոր տերութենների, ան-
ցուղարձի հետ կապվում ա հազար թելերով:

ՊԱՂՏՈ.—(Սեղոյին) Դե, հեքիաթ մի պատմի, գնանք:

ՍԵՂՈ, ՎԱՐԴՈՒԵՆ, ՍԱՐԳԻՍ ՅԵՎ ՊԱՂՏՈ.—Գնանք (բոլորն էլ
եսալ գնում են):

Բ. ՊԱՏԿԵՐ

(Ներս ե գալիս Մարն, բեկերը վեր քաշած, միքանի աման
բերում դարսում քալսի սակ յեվ դես ու դեմ Եարժվում ես ու եմ
գործը անելով):

ՄԱՐՈ.—(Սրտեղած) Ե՛ս ել հո կլանք չի: Ասում են ուրիշ գե-
ղերում աղջկեքք միլիցիոներ են դառել, հըլա շատ
տեղեր զանազան գործեր կատարում ու գլուխ պա-
հում: Անն, որինակը մեր գեղումն ա. Սարոյնց Սա-
թիկը տղատ ման ա դալի, կոլտողում աշխատում ա:

ՄԿՈ.—(Ներս մտնելով) Աղջի, հերդ վճրդի յա:

ՄԱՐՈ.—(Ամաչելով) Ասում են՝ նոր մաշինեք են բերել քաղա-
քից, գնացել ա մտիկ տա (աբոռ ե տալիս):

ՄԿՈ.—(Նստում ե) Համ կանչում ա բան ասի, համ ել տանք
չի մնում, (հագում ե) Ը՛հը՛, Ը՛հը՛, խը՛, խո՛, թո՛ւ
(բում ե հասակին ու վոսով տրում):

ՀԱՄՈ.—(Գալիս ե լավ հագնված) Բարե՛, Մկո ջոն, ի՛նչ ես շի-
նում եստեղ, Սեդոն վճրտեղ ա (նստում ե, իսկ Մարն
բազնվում ե դուրս յեսելը յեվ ականջ դնում նրանց):

ՄԿՈ.—Գնացել ա նոր մաշինեքը մտիկ տա. դու են ասա, ես
աշխրքի բանը վճնց կըլի:

ՀԱՄՈ.—Աշխարքը լավ ա, մարդն ա վատացել. թի եսպես գնա,
աշխարհի գործը շատ խաբար կըլի, ամն են ա՛նաստ-
վածությունը, վոր մեջտեղ ելավ, գլխներին մեծ
փորձանք ա գալու:

ՄԿՈ.—Վոնց թե ամա, ել ամա մնաց. հս կառավարութենը ջրանցք ա՛րացել ա, ճամպաներ ա՛ շինուում ա, հա՛ շինուում ա, գեղացի քյասիբ խալխին ոգնուում ա, հըմի յել ասուում են՝ ելեկտրիկ լուսը շաղ ա տալու չորս կողմը, ենպես, վոր գիշերը փողոցում կանգնի ու կարդա, աչքերիդ ախնոց մի դնի:

ՀԱՄՈ.—Յես են եմ ասուում, մարդ ինսանը շատ խարար ե ելել, ել հեր ու վորդի իրար չեն ճանաչուում, ել մեծ ու պըստիկ չի մնացել: Ջորի պատճառով թացն ել երվում ա: Առաջվա ժամանակը վոր մի քյասիբ մարդ գալիս եր մի մանեթ ուզում, յես նրան յերկուան եյի տալի. հըմի կոպեկն ել տալը վախում հմ, պարտք վերցնողը ել լետ չի բերուում... իհարկե՛, Մկո ջան, խոսքս քեզ հըմար չի, յես քեզ շատ եմ ոգնել և ելի կոգնեմ. թե նեղութուն ունես, ասա, մի ամաչի, մենք իրար հասնուում ենք, մեր ցավերը առաջ բաժանել ենք, հիմի յել կբաժանենք:

ՄԿՈ.—Հըրա շատ բան չեմ հասկացել, մեկ ենպես ա երևում, վոր գործը լավ ա ըլելու, մեկ ել թարս ա լինում: Առջի որ մի մարդ կտարեց մաշինի կալուսը, վոչոք չի տեսել կտարելը, նրա վրա կասկածում են, ասում են՝ դաստի յա արել, վոր կոլխոզի գործը փչանա:

ՀԱՄՈ.—Ախր եդ կոլխոզը ինչի՞ հըմար ա, են վոր բոլորդ շատ պարեն հասցնեք, են ել ձեր ձեռքից խլի կառավարությունը: Տո՛, եդ մաշինեքը մեր կառավարության սարքածն ա, շուտ ա փչանում նրա հըմար, վոր ապրանքը լավը չի և մեկ ել աստված չեն ճանաչուում, ծաղը են անում:

ՄԿՈ.—Ե՛լ ամեն ինչ թամամ՝ ելավ: Իրիկունն ել աշխատանքը նոր ելինք պրծել, մեկ ել եկավ կոմցոմոլիստ Վաղգենը, հայտարարեց՝ «ով անաստված միության անդամ ա, ժամի վեցին թող գա խրճիթ գեկուցում լսելու ռադիոյի միջոցով»: Ես մեկ բանը իմ դժվարս ա գալի, դրա համար ել սիրտս չի կաշում կոլխոզի գործին. մեկ ել տասը մարդ վրեդ բան ա խոսում:

ՀԱՄՈ.—Հըրս դու շատ վատ բաներ հս լսելու կոլլեկտիվում: Թող Վաղգենին հարց տալիր, թե՛ կաբո՞ղ են աշխարքի բոլոր մարդիկ մի աստղ շինեն, կես լուսին շինեն,

մի գլուղի տաքութիւնն տվող արև: Մկն ջան, խնկքդ
գլխիդ հավաքի, ես բոլորը մի ստեղծող կա: Լսի, դու
առաջ քո գործի տերն ելիր, ուզած ժամանակդ աշ-
խատում ելիր, քեֆը քոնն եր, հըմի ուրիշի հրամանով
ես գործ շինելու:

ՄԿՈ.—Այ մարդ, մեկ-մեկ շատ դրուստ բաներ ես խոսում, հենց
իմ սրտիցն ես խոսում: Իմ գլուխս զատ չի մտնում
ես մեծ միությունից, են ա, մտածում եմ, դուրս
գամ:

ՀԱՄՈ.—Մկն ջան, ետենց մտածելն ել սխալ ա, քեզ հիմի դուրս
գալ հարկավոր չի, դու պետք ա մնաս մի ժամանակ
եւ. թե փողից, հացից, շորից նեղվես, լես քեզ քոմակ
կանամ: Դու պետք ա քեզ նման դժգոհների հետ միա-
ցած ենպես անեք, վոր կամայ-կամաց քանդեք կոլ-
լեկտիվը:

ՄԿՈ.—Եդ վոնց կանենք, դժվար հարց ա:

ՀԱՄՈ.—Դուք պետք ա միշտ նոր պահանջներ դնեք կոլխոզի
առաջ, Եսոր մի մեքենա փչացնեք, մեկել որ ուրիշ
գործիք կտրեք, կով ու յեղ թունավորեք, մի ուրիշ
որ հիվանդ ձևանաք ու աշխատանքի չգնաք, մի որ
կոփվ անեք, ահա եսպես կլուծվի կոլխոզը, և դուք ել
ձեզ համար ելի առանձին կաշխատեք ու տեր կըլեք
ձեր գլխին:

(Մինչեւ այսեղ սկզբից մինչեւ վերջ դռան յետից Մարոն լսեց
նրանց խոսերը յեւ գլուխը քափ եր ցալիս):

ՍԵՂՈ.—(Ներս մտնելով) Բարև:

ՀԱՄՈ ՅԵՎ ՄԿՈ.—Բարձր, այ մարդ, վճրտեղ ես կտրել:

ՍԵՂՈ.—Դուք տեսել եք նոր մաշինեքը. սրանք ավելի լավն են
երևում, մի հրաշք բաներ են. Ֆաբրիկի բանվոր-
ներն են շինել, ա՛յ, հալալ ու պիտանի մարդիկ ես
բոլորը շինում են մեր դորձը հեշտացնելու հըմար,
անաստված են. աստժու չշինածը նրանք են շինում:

ՀԱՄՈ.—Հիմի եդ թողնենք, տրակտոր-մրակտոր դարտակ բա-
ներ են. դու են մասին ասա...

ՍԵՂՈ.—Ինչի մասին:

ՀԱՄՈ.—Են, վոր ուզում եյիր կովդ ծախես. լեկել եմ՝ բազար
անենք, վերջացնենք:

ՄԿՈ.—(Սեդոյից) Կովդ ծախում ես:

ՍԵՂՈ.—Ծախում եմ, ամա գին չի տալի, ասում ա՛ 150 մանկիթ թանգ ա:

ՊԱՂՏՈ.—(Ներս Ե մտնում) Ի՞նչ եք նստել, հիմի արիք տեսեք նոր տրակտորը վոնց ա վարում, են մեկին ել նրա յետևից շարքով ցանում, ասում են՝ եղ տեղը փորձի հըմար են վարում:

ՍԵՂՈ.—(Պաղտոյից) Սպասի, ես կովի բազարը անենք, նոր գնանք:

ՊԱՂՏՈ.—(Խիտ) Ի՞նչ, կովը ծախում ես. չես քեզ յերեկ չասի՞, վոր ուզի չեմ ծախելու, մենք մեանալու յենք կովխոզին, չենք ծախի. պրծնով:

(Համոն դեմքը խոտուում Ե յեկ խեր ցայտցի Ե գցում Պաղտոյի վրա):

ՍԵՂՈ.—Կովը մեզ վրա չի գալի. դու հո գիտես՝ ես քանիսը յեղալ մեր տանը՝ թեմեկ չի բռնեց. հենց վոր գնաց ուրիշի տուն, լավացավ, շատ կաթ տվեց. զարմանահրաշ բան...

ՊԱՂՏՈ.—Մեկ բան ա, չեմ թողնի, վոր ծախես, դրա հըմար գլուխս ել կտամ, չեմ թողնի և եղ մասին ել վոչ մի խոսք, շուտով կովխոզ ենք կազմելու, պետք ա...

ՀԱՄՈ.—Գանի վոր եղպես վեճ ա գնում ձեր մեջ, գնամ: (Մըկոյից) Գնանք, Մկո, չե՞ս գալիս:

ՄԿՈ.—Գալիս եմ: (Սեդոյից) Ինչի՞ հըմար վոր կանչել ելիր, հետո կխոսանք, այժմ յես գնամ մաշինեքը տեսնելու:

(Համոն յեկ Մկոն գնում են):

ՍԵՂՈ.—(Պաղտոյից) Ա՛յ վորդի, դու ինձ ուրիշների մոտ ամաչացնում ես:

ՊԱՂՏՈ.—Դյուղատնտեսը գյուղումն ա. լես դաստի ասացի երկու որից կգա. այս առավոտ նա խոսեց, թե՛ ինչ՞ու կովերը շատ կաթ չեն տալի. նրա համար, վոր լավ պահել չենք իմանում, ազնիվ խոտաբույսեր չենք կերցնում: Վոչի՞նչ, կովխոզում կլավանա:

ՍԵՂՈ.—Ել դրանից լավ ուտացնել կըլի, ուտում ա հմ ուտում՝ մինչի տրաքիլը:

ՊԱՂՏՈ.—Ձե, չհասկացար, գյուղատնտեսն ասում ա, վոր լավ տեսալի խոտաբույսեր պետք ա կերցնել... Հն, մոռա-

ցա ասեմ՝ մեր գլուղատնտեսի բերանը քիչ ծուռն ա,
ամա լաման խոսում ա հա՛, գլուխը մեծ ա, ամա չե-
րևում ա՛ խելքից հարուստ ա հա՛...

Սե՛Ն. — (Կանչում է Սարգսից) Սարգիս, Սարգիս, արի:

ՍԱՐԳԻՍ. — (Ներս է մտնում) Ի՞նչ ես ասում:

Սե՛Ն. — Դու գնահ Մկոյին ետեղ կանչի:

(Սարգիսը գնում է),

ՊԱՂՏՈ. — (Սեղոյից) Գործերը յավանջ-յավանջ լավանում են, ես
կառավարութենը սկսել ա կուլակներին հուպ տալ:

Սե՛Ն. — Փանք տիրոջը, հո են խմբապետի որերի պես չի. ես
քանի տարի լա քչասիր խալիսը մի բժի նաֆաս ա
քաշում:

ՊԱՂՏՈ. — Դու ենտեղ չեյիր, մի ա կանջներովդ լսելիր, թե՛ գլու-
ղատնտես Հերոն ի՞նչ գիտուն բաներ ասեց ու բա-
ցատրեց. բայց մի բանը վատ ա, վոր քեթից մատով
միշտ խառնում ա. ու շուտ-շուտ կողքին թքում: Թե
գեղացին անի, իրանք կխոսան (գնում է):

Սե՛Ն. — (Ինքն իրեն) Մի տեսնենք՝ Մկոյի խելքը ինչ ա կտրում
ես կոլխոզի մասին:

ՄԿՈ. — (Ներս է մտնում) Հը՛, թե՛նչ ա, խեր ու բարին ըլի:

Սե՛Ն. — Եդ թաղա կոլխոզի լեզվից հասկացրու ինձ, խելքս բան
չի կտրում:

ՄԿՈ. — Իմ էլ խելքը բան չի կտրում, ամա վոնց վոր չերևում
ա, լավ բան ա:

(Սարգիսը ներս է մտնում գրեթե ու քերթեր քեյի սակ. նրա յեթվից
ներս են մտնում 15—20 չֆավոր ու միջակ գյուղացիներ):

ԳՅՈՒՂԱՑԻՆՆԵՐ. — Յաման հաստատուն, պինդ մաշինեք են, հա՛,
զբանց հունարը շատ մեծ ա լինելու:

Սե՛Ն. — Սարգիս, ա՛յ տղա, արի մի բացատրի մեզ եդ կոլխոզի
լեզուն, դրա ոգուտը:

ՍԱՐԳԻՍ. — (Իսկույն բռնում գալիս է բուրի մեջեղը՝ քերթը
ձեռից) Ուզո՞ւմ եք միքիչ կարգամ:

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ. — (Անհամբեր) Կարգա՛, կարգա՛:

ՍԱՐԳԻՍ. — (Կարգում է) Հին գործիքներ՝ արձր, ցաքան... Հի-
մի դրանք անպետքացան, նոր հունարներ մեջտեղ
եկան՝ տրակտորներ, շարքացաններ, կալսիչ, հնձիչ
ու քամհարներ: Որինակ, տասը ջուխտ յեզան գործը

մի որում կանի տրակտորը: Տրակտորը շուտ ա վարում, հողն ել մի լճով փշրճւմ, փխրում, բանաջնող մարդ ել տակք՝ մեկը բոլ ա, քեֆդ ել կդա, չերբ դողա: Տեսնճւմ էք, են, ինչ վոր հաղնում աւ դործածում ենք, քաղաքի՝ բանվորն ա մեզ տալիս, և վորպեսզի նա մեզ շատ ու լավ բաներ աա, հենց դրա համար ել մենք մեր ունեցածը պետք է միացնենք ու կազմենք կոլխոզ, վորպեսզի ֆարրիկային ու դործարանին հում նյութ շատ տանք՝ բամբակ, բուրդ, կանիփ, ցորեն, և շատ բաներ: Քաղաքը առանց դուռի յոլա չի կարող դնա, իսկ մենք ել առանց քաղաքի բանվորի սղնության չենք կարող յոլա գնալ: Կեցցէ միությունը:

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ. — Կեցցէ... (Մափահարում են):

ՎԱՐԳՈՒՇ. — (Լալով ներս ե վազում) Ի՞նչ էք նստել, հըլա մի արիք, ոգնեցեք, շճա...

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ. — (Շփոթված) Ի՞նչ կա, ի՞նչ ա պատահել, ասան:

ՎԱՐԳՈՒՇ. — Կողս ստեղծում ա, վա՛յ իմ Նազիս, վա՛յ իմ ջանիս, ստեղծում ա:

ԲՈՂՈՐԸ. — Ի՞նչ խաբար ա, հը՛ (ոտազ դուրս են ուզում բուշիլ, Սարգիսը նրանց չի բողնում):

ՍԱՐԳԻՍ. — (Մասնացույց անելով դեպի դուռը) Ա՛ժմ տեսնճւմ էք անհատական տնտեսության վիճակը, վոնց ա կամայ-կամաց քայքայվում: Ուժը միության մեջն ա: Կեցցէ միությունը:

ԲՈՂՈՐԸ. — Կեցցէ (ծափահարում են ու դուրս գնում):

ՎԱՐԳՈՒՇ. — (Մեռակ, ձեռները ձնկներին տալով) Վա՛խ, վա՛խ իմ Նազիս, ջան Նազիս (լալով նստում է քախսի վրա) — աստված եսպես ա պատժում անհավատներին, քանդում նրանց ողախը:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Ք. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քեմք ներկայացնում ե Համոյի տան սենյակներից մեկը, աջ ու ձախ կողմերում մեկ-մեկ թախտ, վորոնց վրա փռված են գորգեր: Յերկու սեղան, վորոնց վրա սպիտակ սփռոցներ չեմ չորս աթու սեղանների շուրջը: Մի կամոդ, վորի վրա դրված ե մի մեծ հայելի յեմ պատերին կախված զանազան նրկարներ: Սենյակի աջ ու ձախ կողմերից բացվում են դռներ, աջը տանում ե փողոց, իսկ ձախը՝ այլ սենյակ: Սենյակն ունի յերկու պատուհան:

Գ. Պ Ա Տ Կ Ե Ր

Վարագույր բացվում ե, Համոն դրսից գալիս ե ներս՝ չիբուխ քաշելով:

ՀԱՄՈ.—(Բարձր ձեմով) Հոփփ, Հոփփ, աղջի Հոփփ, չի լսում, վոնց վոր յերևում ա, շատ մեծ գործերով ա զբաղված, (ավելի բարձր) Հոփփ, Հոփփ, ել ձեմ չմնաց, բողազս ցավաց...

ՀՈՒԹ.—(Ներս ե մտնում կոսրասվելով) Ա՛յ մարդ, ի՞նչ ես բղավում, յես հո ավարա չեմ. ելի ի՞նչ կա, գուցնդ գցել ես պատի պես...

ՀԱՄՈ.—(Նստում ե) Դու մի ասի, Սարոյենց Մելիք լակոտը ելի մեզ «Անաստված» դազեթումն ա անցկացրել. ինձ նկարել են մի խաչ քամակիս տնկած, յետևս ել մի բատրակ, միթոմ ավելով ինձ ավլում ա... Հըլա մի ձեռս կընկնի՞ր... Վոնց կշարդեմ վոսկրները, կզամ ժամանակը... Դու եմ ասա, ի՞նչ ելիր շինում դրսում, ձեմս կարվեց բղավելուց:

ՀՈՒԹ.—Ե՞դ ելիր ասելու. չեմ թողնում, մի բոլ խաբար առնեմ. ճենց նոր սկսել ելի խոսալ տերտերենց Հեղուշի հետ, մեկ ել ձեմդ առա...

ՀԱՄՈ.—Հը՛, ի՞նչ կա թագա խաբար, մեռնող մնացող...

ՀՈՒԹ.—Թագա խաբար են ա, վոր Սեդոյենց կովը...

ՀԱՄՈ.—Ծախե՛լ են, ի՞նչ գնով...

ՀՈՒԹ.—Ի՞նչ ծախել, ի՞նչ բան, կովը սատկել ա, սատկե՛լ...

ՀԱՄՈ.—(Վ.բեմխնդրութեամբ) Սասկե՛լ ա, լավ ա՛, թող խելք-
ները գլուխները դա, վոր Համոյի խոսքը լսեն:

ՎՌԱՄ.—(Շտապ ներս ե գալիս ձեռքին մահակ, հացատուրակը
վզից կախած) Տարա՛ն, տարա՛ն...

ՀԱՄՈ ՅԵՎ ՀՌԻՓ.—(Շփոթված) Ի՞նչը տարան, ի՞նչ ա պատահել,
շո՛ւտ, սաս...:

ՎՌԱՄ.—(Մի քայլ առաջ գալով) Յեղնորից լերկուսը,
վոնց ելավ, մասն խոտհարք. զորուզի Սահակը և դե-
ղի քչատիրն ու միջակը հավաքվել էլին հացամթե-
րումի, բռնեցին ու բաց չեն թողնում:

ՀԱՄՈ ՅԵՎ ՀՌԻՓ.—Վճրտեղ կորան, վճր ճամպով քշեցին:

ՎՌԱՄ.—Ասում են՝ ցորենը չեք տվել հացամթերման համար
բերեք բաց թողանք:

ՀԱՄՈ.—(Վ.ուամին) Վա՛յ անաստվածներ, դե՛ արի դնանք տես-
նենք եզ ինչ են ուզում մեզանից, ես ամեն ոք գլխիս
ոյին են բերում (Համոն յիվ Վ.ուամը գնում են):

ՀՌԻՓ.—(Հուզված) Ես ա հո՛, յերանի՛ հն լավ որերին. Են ժա-
մանակները հարուստը իր տեղն ունեւր, աղքատն էլ
իր տեղը, մարդիկ մեր տան առաջից ամաչելով էլին
անցնում, մեծ ու պստիկ ջոկվում եր, հիմի բատրակն
էլ մարդի սըբա յե ընկել՝ ջոկ ողա, ջոկ սեղան ա
ուզում... Հին ժամանակ շան հետ ուտում եր, շան
կողքին էլ քնում, հիմի աղը կամ թե յիղը պակաս
ելավ, խարաբը գնում ա կոմսոմոլ, քննիչ ա գալի
ու հազար մի խոսք վրա տալի, և մեկ էլ տեսար՝
նճր-նոթ պահանջներ ա դնում—«Որը հսքան ժամ
աշխատանք, հսքան ժամ հանգիստ, հսքան անգամ
ուտել...», Ել վճր մեկն ասիմ...

ՀՈՒՍԻԿ.—(Մահակը քեվի ցակ բռնած, համրիչ փաշելով ներս ե
մտնում) Վողջճւյն ձեզ:

ՀՌԻՓ.—(Ուրախ) Որհնեցեք, տեր հայր (աղբ համբուրում է). հա-
մեցեք, նստեք (աթոռ ե ցալիս):

ՀՈՒՍԻԿ.—Աստված որհնե (աղբ բարձրացնում ե ՀՌիփի գլխին
յեվ նստում), Համոն վճրտեղ ա գնացել:

ՀՌԻՓ.—Հանգստացի, շուտով կգա, յես գիտեմ, տեր հայր,
քաղցած կլինես:

ՀՈՒՍԻԿ.—(Զարմացած) Այդ վճնց հասկանում ես մարդի աչքե-
րից: Իմաստուն ես, հա...

ՀՌԻՓ.— Եղբանն ել չհասկանամ, հիմի քեզ համար տես ինչ կրեբեմ (զնում է)։

ՀՈՒՍԻԿ.— (Չորս կողմը ակնարկ գցելով) Լավ տունն ա, Համոյի գործը միշտ կարգին ա յեղել։ հե՛լ անցյալ վոսկի որեր, ի՞նչ քեֆեր ենք արել ես ողայում, հիմի ամիսը իրեք անգամ անջախ ենք քեֆ անում. են ժամանակ Հոփին ել շատ ջահել եր, ասես լուսնակի կտոր ըլեր. հիմի յել ելի վատ չի, թարմությունը պահում ա...

ՀՌԻՓ.— (Բերում է լավաթ, միս, գինի, կանաչի ու դարում սեղանի վրա) Համեցեք, տեր հայր, անուշ արեք։

ՀՈՒՍԻԿ.— Շնորհակալ եմ (սկսում է ուտել)։ Ինչո՞ւ մի բաժակ ես բերել. մեկն ել բեր, միասին խմենք մեր բոլորի չեղջանկության համար. մենակ չեմ կարող խմել, դու լավ գիտես իմ խասութթը...

ՀՌԻՓ.— Մուտացել ելի, տեր հայր, վոր մենակ չես սիրում խմել, բաց չես շատ չեմ կարող խմել։

ՀՈՒՍԻԿ.— Վոչի՞նչ, բեր մի բաժակ ել և մասնակից յեղիր աստը՝ ծո սեղանին։

ՀՌԻՓ.— (Կսրատվելով) Խաթրդ չեմ կոտրի (զնում է)։

(Մի հավասացյալ ձեռ գյուղացի ներս է մտնում)։

ԳՅՈՒՂԱՅԻ.— Որհնեցեք, տեր հայր։

ՀՈՒՍԻԿ.— Աստված որհնի, ի՞նչ կա։

ԳՅՈՒՂԱՅԻ.— Ախր ես չերկու սըհաթ ա քեզ եմ ման գալի, քանի որ ա՛ խոսք եք տալի, չեք գալի չերեխին մկրտելու։

ՀՈՒՍԻԿ.— Հիմի շատ գործ ունեմ, աշխարհի բաներից նոր խաբարներ կան. դու գնա, չես մի սըհաթից կգամ։

(Գյուղացին զնում է)։

ՀՈՒՍԻԿ.— (Ուտում է, խմում) Կյանքը ուտել, խմել, կ՛ բան անե՛...

Մեղս, մեղս քեզ, տեր աստված, ի՞նչ ա կյանքը, ուտել, խմել, կ՛... Ելի չար սատանան փորս ա մահել...

ՀՌԻՓ.— (Բաժակը բերում յով նստում է սրտերի դեմը) Միսը լավ ա. լավաչը կտոր ենք թխել, հո մեր գինին գիտես...

ՀՈՒՍԻԿ.— Գիտամ, վոնց չե (լցնում է բաժակները). դե, խմենք Համոյի և քո կենացը (խմում են)։

ՀՌԻՓ.— Համոն ելի ուշացավ։

ՀՈՒՍԻԿ.—Վճրահոյ ա գնացել, ինչպէս երևում ա, դորժը շատ շատ ա, աստված ավելացնի:

ՀՌԻՓ.—Ե՛հ, դորժ ել վոր չըլի, ես կառավարությունը չեղած տեղից դորժ ա բաց անում:

ՀՈՒՍԻԿ.—Վոչի՛նչ, ես բոլորը կանցկենան, ելի հին սրերը կըզան, միքիչ ել համբերենք (լցնում ե բաժակները), խմենք հրկսիս կենացը, աստված ուրախ պահի մեզ (խմում են). միս, սիրտս երվում ա...

ՀՌԻՓ.—(Աւխում) Սառը ջուր ամմ...

ՀՈՒՍԻԿ.—Ձե, չե, սառը ջուրը չի հանգցնի իմ կրակը (յերգում ե)

Յար ջան, ասնդ ի՛նչ կանես*),

Հոգիս, սիրտս կվառես...

Գիտեմ, միաքչ ծածկում ես,

Ինձի ինչի՛ կմաշես:

ՀՈՒՍԻԿ.—(Շար.) Հոփի ջան, մի բան ել դու յերգի:

ՀՌԻՓ.—Տեր հայր, դու լավ ես յերգում, իմ առաջվա ձենս չի մնացել, սիրտ ել չունեմ...

(Շտապ ներս ե մտնում մի պառավ կին):

ՊԱՌԱՎԸ.—Որհնեցեք, տեր հայր:

ՀՈՒՍԻԿ.—Հն, ի՛նչ որհնեմ, չեք թողում մի բոլ նաֆաս քաշեմ. ի՛նչ կա, ասա...

ՊԱՌԱՎԸ.—Ախր մեռելը մնացել ա մեջտեղ, որը իրիկուն ելավ, քեզ ման ենք գալի:

ՀՈՒՍԻԿ.—Հո, դրուտո ա, սատանան մտահան արեց, դորժս քիչ ա, վերջացնեմ թե չե, կգամ, դու դնա:

(Պառավը գլուխը բափ տալով գնում ե: Պառավն ու ծեղ գլուղացիին փողոցի կողմի պատահանից ներս են նայում, զլուխները հագիլ՝ յերեվում ե):

ՀՈՒՍԻԿ.—(Դառնալով Հոփիին) Հն, են ելի ասում, կարճ ժամանակ մնաց. ելի առաջվա պես սիրտդ կբացվի:

ՀՌԻՓ.—(Հետաբերուքյալք) Եդ ի՛նչ ասացիր, տեր հայր, ո՞վ բաց կանի իմ սիրտը, ի՛նչ ա լինելու:

ՀՈՒՍԻԿ.—Շուտով աստծո իշխանութունը կթագազվորի և...

ՀՌԻՓ.—Ուրեմն որհնի՛ր միքիչ, վոր շուտ կատարվի:

*) «Յար ջան, յանարիդ մեռնեմ»-ի յեղանակով:

ՀՈՒՍԻԿ.— Արբի քիչ կողքիս նստի, այսօր տիրոջ հրամանով կարելի յա քեզ անդամակ վիճակից ազատել, լես պետք ա քեզ ներշնչեմ հոգին սրբո շունչը:

ՀՈՒՓ.— (Նստում ե Հուսիկի կողքին յեվ գլուխը կռացնում) Որհնիր...

ՀՈՒՍԻԿ.— Հիմի աստծո հրամանով խոսենք, թե՛ ձեր եսքան մալը և տուն տեղը ձեւ պետք ե մնա, լեթե աստծո հրամանով Համոյի հոգին մի որ լերկինք բարձրանա:

ՀՈՒՓ.— Ինձ կմնա:

ՀՈՒՍԻԿ.— (Յերկու ձեռքերի մեջ Հուսիկի գլուխը վեր ե բարձրացնում) Նայիր աչքերիս, դու մարդու միտքը աչքերից հասկանում ես. յեթե յես, դու և Համոն մի որ գնանք ես աշխարհից, այն ժամանակ ձեւ կմնա...

ՀՈՒՓ.— Հասկացա՞... միայն հարազատ դավկին կարող ա մնա:

ՀՈՒՍԻԿ.— Յես գիտեմ, վոր դու Սողոմոնի պես իմաստուն ես, մարդու աչքերից հասկանում ես. դե, ուրեմն, տիրոջ կամքը թող կատարվի:

ՀՈՒՓ.— Թող աստծո կամքը լինի:

ՀՈՒՍԻԿ.— Յեղիցի կամք այառն (փաթարվում ե Հուսիկին. հանկարծ ներս ե մտնում Համոն յեվ տեսելով նրանց դիրքը՝ կանգնում, աչքերին չի հավաստում. մտնելով ետ ե աչքեր. տեսնելն այդ ժամանակ շուտ ե գալիս յեվ տեսնում Համոյին կանգնած աչքեր տեսելիս. իսկույն դրդում ե Հուսիկին յեվ տկանջին փսխում. Հուսիկը շատ բռնում ե ու վազում դեպի Համոն):

(Պառալն ու ձեռ հավասացյալ գլուղացին իջնում են ու գնում):

ՀՈՒՓ.— (Սխալիտ) Համո, վճրտեղ մնացիր:

ՀԱՄՈ.— Դու ես ասա, ի՞նչ էլիք շինում այստեղ:


ՀՈՒՓ.— Քո գնալուց հետո գլուխս սաստիկ ցավեց, կանչել տրվեցի տերտերին, վոր աղոթի, նա մի գլուխ Սաղմոս կարդաց և գլխիս ցավը թեթեացավ:

ՀԱՄՈ.— (Գալիս ե տեսնելի մոտ) Որհնեցեք, տեր հալը:

ՀՈՒՍԻԿ.— Աստված որհնի ձեզ ել, ձեր շեն տունն ել. հենց նոր լեկա. քաղցած էլի, մի բան խնդրեցի...

ՀԱՄՈ.— Տունը քոնն ա, սիրտդ ի՞նչ վոր քաշում ա, ուզի. Հո՞ւփ՝ մի բաժակ և գինի բեր (Հուսիկը գնում ե ուրախ):

1097
A 38673



- ՀՈՒՍԻԿ.**—Սող ըլիք, երկսով մի բարձի ծերանաք... չես դու-
լիս էյի մտադ, փողոցում չերեխեն պատահեց և ասաց,
վոր Հոիփը կանչում ա:
- ՀԱՄՈ.**— Խեբ ա, ասան:
- ՀՈՒՍԻԿ.**— Կարճ ասեմ, գլուխդ չցավացնեմ, ևս շարաթ բան դուրս
չեկավ, հույսս դու չես...
- ՀԱՄՈ.**— Լսվ, ուղարկիր եշդ, միքիչ ալիր տամ:
- ՀՈՒՍԻԿ.**— Իսկ փողից-մողից մի բան...
- ՀԱՄՈ.**— (Հանում է գրպանից) Աս ևս, լուս գնա, տեսնենք աշ-
խրքքի վերջը վոնց կըլի:
- ՀՈՒՍԻԿ.**— Շնորհակալ եմ, աստծո հրամանով շատ լավ կլինի,
չես դաթի յերազ եմ տեսել ևս գիշեր, վերջը բարի լա
(վեր է կենում, ճնորհակալություն հայցնում ու գնում):
- ՀԱՄՈ.**— (Վախի կանգնում, նախապահ է զգում) Յես ել եմ ասում,
վերջը լավ կըլի (զնում են դուրս):
- ՀՌԻՓ.**— (Գալիս է ներս գինիք յիվ բաժակը ձեռքին) Վա՛յ, գնա-
ցել են, բայց ի՞նչ լավ էլավ, վոր Համոն բան չհաս-
կացավ. ասենք՝ նա ի՞նչ հավատում ա (կանչում է Վր-
ուամին) Վա՛մ, Վա՛մ, տո՛ Վա՛մ:
- ՎՌԱՄ.**— (Ներս է մտնում) Ի՞նչ կա:
- ՀՌԻՓ.**— Շնուտ արա, ցախը պատարաստիր, կովերին խոտ տո՛ւր,
դո՛ւր մաքրիր, եշը ծառին կապիր, աղբից ջուր ընը:
- ՎՌԱՄ.**— Եդ վճր մեկն անեմ, հո մաշինա չեմ վոր...
- ՀՌԻՓ.**— (Ճիպոսը վերցնելով) Ել խոսում ևս (վազում է Վրամի
վրա յիվ ճիպոսով մի յերկու իջեցնում). հլա մի սրան
մտիկ արեք, դժև մնացիր դեմ խոսելու:
- ՎՌԱՄ.**— Փչանած դուք (փախչում է):
- ՀԱՄՈ.**— (Ներս է մտնում) Հը, ի՞նչ ա պատահել, Հոիփո:
- ՀՌԻՓ.**— (Չարացած) Եդ Վոսա լակոտը սկսել ա դեմ խոսալ. գործ
եմ տալիս, չի անում, կանգնում պատասխան ա տա-
լիս: Վերջերս ել ինչ-վոր մի բան խոսում ա, անաստ-
ված միության մեջ ա գրվիլ:
- ՀԱՄՈ.**— Վոչի՞նչ, շատը գնաց, քիչը մնաց, տերտերը փողոցում
իմ ակնջին կամացուկ փսփսաց, թե քիչ ժամանակից
հետո իշխանությունը փոխվելու յա, ելի մեր արեւը
փայլելու յա, ուռնա...
- ՀՌԻՓ.**— Դուռը թակում են (զնում է):

ՀԱՄՈ.—(Շար.) Ուռածած, Հոբիփ, շուտ արա, գինի, միս, բոլոր ու
լավաշ բեր, քեֆ անենք:

ՀՌԻՓ.—(Համոյին) Առ ես թողթը, տես ինչ կա, դատարանի ծա-
ռան ա բերել:

ՀԱՄՈ.—(Սկսում ե կարդալ) «Հինգշաբթի, առավոտյան ժամը
տասին, քաղաքացի Հոբիփ Վարդանյանը պետք եներ-
կայանա դատարան, տուժող Վրամի գործի առթիվ»:
Ես ինչ խաբար ա, քեզ վրա ինչ գործ կա, այ կնիկ,
հո Վրամին մի վատ բան չիս ասել, չիս թակել:

ՀՌԻՓ.—Առաջին որը Վրամին ինչ շատ բարկացրեց, յես ել վեր-
ցըրի մի քար ու խփեցի վոտին, վոտը միքիչ ուռավ:

ՀԱՄՈ.—Ահա, հենց եզ եր պակաս. դե շուտ արա, Վրամին կան-
չի, մի հինգ մանեթ տամ, թող պնա բողոքը յետ վեր-
ցընի:

ՀՌԻՓ.—Յես են որը նրան տվեցի հինգ մանեթ, նա չվերցրեց
ու հերսոտ պնաց:

ՀԱՄՈ.—(Վոսի վրա անհանգիստ անցուդարձ անելով) Ել ինչ մը-
նաց, քարը տալիս ելիր, խփեյիր գլխին սատկացնե-
յիր. ես ինչ ոյին ա, վոր գալիս ա մեր գլխին... ա-
ռաջ բատրակի մի չերեսին վոր խփում եյինք, շուտ
եր տալիս մյուսը: Ա՛խ, Անգլիա, վորդի լես, մի արի,
ելի, սրանց համար մի ծակը հարյուր թուման արժե-
նա... Հըլա ինչ պես (բռունցքը կրծքին խփելով) հա-
լալ մարդուն ել ձայնագուրկ են անում:

ՀՌԻՓ.—Սպասի, Համո, ես ինչ ձեներ են գալիս փողոցից...

ՀԱՄՈ.—Դրո՞ւտ ա, մեր տան առաջումն ա, գնանք (եսալ գը-
նում են):

(Վարագույրն իջնում ե յեվ շուտով բարձրանում: Բեմը ներ-
կայացնում ե Համոյի տան առաջի փողոցը. բազմություն ե
փողոցում: Համոն ու Հոբիփը դիտում են: Իրենց տան պատուհան-
ներից կամ պատի վրայից):

Գ. ՊԱՏԿԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏ. ՀԵՐՈՆ.— (Բարձր սեղ կանգնած բան է խոսում. բերանը քիչ ծուռ է. նահալս քիբը մտանքով խառնում է) Մինչև խորհրդաչնացումը բոլոր կառավարութիւնները ձեզ պահում էին մութ, խավարի մեջ, գլուղը չէր տեսել արակտոր, շարքացան, կալսիչ, հնձիչ և այլ մաշինաներ: Այժմ բոլորդ ել տեսնում եք, թե քյասիր, աշխատավոր խալին ամեն բանից օգտւում տ, բան ա սոյորում: Առաջ ես բոլոր մաշինեքը ձեր աչքից հեռու էլին պահում, վոր դուք միշտ քյասիր մնաք, ձեր աչքերը չբացվին: Ես բոլորը շինել են ձեզ նման մարդիկ, գործարանի ուստա բանվորները: Մենք պեաք ա նրանց քոմազ անենք գյուղատնտեսական արտադրանքով, վոր նրանք ել մեր գործի համար մեզ սան լավ ու շատ մաշինաներ, հագուստ, չիթ, բլադ, սապան; նավթ և ամեն բան: Հենց վազվանից մենք կանցնենք լերկրորդ կոլխոզ կազմակերպելու աշխատանքներին: Կեցցե միութիւնը, կեցցե դիտութիւնը, կորչի կրոնը, նախապաշարումը:

ԲՈՂՈՐԸ.— Կեցցե, կեցցե (ծափահարում են). ուռ, կորչի կրոնը: (Մինչ այդ, վոր Համոն ու Հոխիբ լսում էին նրանց ժողովուրդը ցրվելուց հետո ապուեի պես իրար յեես են նայում):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է Սեդոյի տան դարպասը, վորի յերկու կողմի պատերը փուլ են յեկել, վորտեղով գլուղացիք անցուղարձ են անում, ինչպես փողոցում: Յերևվում է տան լուսամուտը

Ե. ՊԱՏԿԵՐ

(Վարդուեր իր քան առջիվ ցած է մի քարի վրա, ձեռնում մահակ)

ՎԱՐԴՈՒՇ.—(Խեղճացած խոսում է ինքնիրեն) Նազին սատկեց, տունս կործանվեց, վճրտեղից մեկ ել ծերը ձերին բերենք ու կով առնենք. (հանկարծ վոզեվորվելով բան է հիշում ու ցուցամասը քանում հակասին) բայց յես ինչի՞ յեմ միտք անում, չե՞ վոր կովս ազանովազեր է եմ տվել, ել ի՞նչ կա, փողը կստանամ:

ՄԿՈ.—(Դալիս է չիբուլս քաշելով) Բարե, Վարդուշ, հերիք ա միտք անես, աշխրքում մարդիկ են կատորվում, հավի պես մորթվում, սատկածը Նազին ա, հո մենք սաղ ենք:

ՎԱՐԴՈՒՇ.—(Չարացած) Յես ելի յեմ ասում, վոր կովս չար աչքից ա սատկել, Համոյի ազան աչքից. վոր իրան չըծախեցինք, բարկացավ, անիծեց. Եհ, ասոված ել ետոր մի բան կանի, ետենց չի մնա:

ՄԵԴՈ.—(Յեկել յել լսում եր նրանց. Վարդուշին դառնալով) Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալի, չար աչքը սո՛ւտ ա, կովը սատկել ա ժանտախտից: Հըլա մի ամիս չկա տերտերին որհնել տվեցիր մի հմայիլ, յերկու շաբթ ուլունք ու կախ տվեցիր կովի վզից. Թե ասոված կա, Թե տերտերի ազոթքը լավ ա, ել ինչի՞ մեր կովը սատկեց: Ինչի՞ մեր դրկիցների կովերը չեն սատկել. եդ նրա հըմար, վոր ժանտախտի դեմ պատվաստել են տվել:

ՄԱՐԳՐՍ.—(Մոտ գալով քեղի քարեր) Հիմի վճնց ելավ. յես են ժամանակ չասի՞ կովը պատվաստել տու, դու թագրիր, Թե՛ «ժանտախտն ի՞նչ բան ա, սո՛ւտ ա, Թե սատկելու լա, կաստկի աչքից»:

(Մինչ այդ Մկոն մոտեցած Սեղոյին՝ ցածր փսփսում երականջին):

ՄԿՈ.—(Սեղոյին բարձր) Յես ել մնացել եմ շշկած, չերկու սրի մեջ. նա ուրիշ բան ա ասում, Սարգիսն ուրիշ Բայց ինչ վոր երևում ա, Սարգիսը շատ դրուսա ա, չքավորի ու միջակի տեղը կոլխոզն ա:

ՍԵՂՈ.—Մկո, Սարգիսը մեզ շատ բան սովորացրեց, նրա բոլոր ասածները դրուսա են դուրս գալի. հըմի հասկացա աշխըբի լաֆը ու վասը: Հիմի տեսնում ես կոմցոմոլի խելքը. դու ասում ելիր՝ ջահել են, բան չեն հասկանում:

(Պաղտոն, Սարոյեց Մելիքը յեվ միմանի գլուղացիներ գալիս են ներս, բարեվում):

ՊԱՂՏՈ.—Տեսիլ եք գլուղատնտեսի ցուլց տված սե հող արտը, վարել են տրակտորով և ցանել շարքացանով:

ՄԻ ԳՅՈՒՂԱՅԻ.—Մի հրահը բան ա, հենց դիտես ամեն մի հատիկը չափսի վրա ձեռով տնկած լինես:

ՍԱՐԳԻՍ.—Ամերիկայում դիփ մաշինքով են վարում, ցանում, հնձում, կալում... Դրա համար ել նրանց գործը կարգի չա ընկել. միքանի տարուց հետո յեվ մեր բոլորի ապրուստը հավասար կլի Ամերիկայի գլուղացու հետ:

ԲՈՂՈՐԸ.—Դրո՛ւսա ա, կեցցե մաշինեն:

ՍԵՂՈ.—Ա՛յ Սարգիս, եդ ձեռիդ գազեթը մի ձեռով կարգա, տեսնենք ի՞նչ կա մեջը:

ՍԱՐԳԻՍ.—(Սկսում ե բարձր կարգալ, բոլորը լսում են) «Գլուղատնտեսութւյան զարգացման և բերքատուութւյան բարձրացման համար. Մարտնչող Անաստվածների Միութւյան Կենտրոնաւորողը յերկու տրակտոր նվիրել ե մեր շրջանի կոլխոզներին...»:

ԲՈՂՈՐԸ.—(Ձեբեքից դուրս են հանում Անաստված Միութւյան անդամատները, բարձրացնում) Ոււ՛... Կեցցե գլուտութւյունը, կորի՛ կրոնը: (Նույն ասեն Սեղո՛ն, Մկո՛ն, Պաղտո՛ն ապուռ կտրած իրար յերես են նայում. բոլորը դուրս են գնում, մնում են Սեղոն, Մկոն յեվ Սարգիսը):

ՄԿՈ.—(Սարգիսն) Դրուստն ասած, յես նոր եմ հասկանում, վոր

ուժը միութեան մեջն ա, կրոնը մեր աչքերը կապել ա
ու չի թողում աշխարքի բանները լավ տեսնենք:

ՍԱՐԳԻՍ.— Եղ նոր ես իմանում, վոչի՞նչ. քիչ ուշը ավելի լավ
ա, քան յերբեք:

ՄԿՈ.— Հիմի պիտի ասեմ դրուստը, վոր մի յերկու որ առաջ Հա-
մոն ինձ ուզում եր գլխահան անի, յես նրան հավա-
տում եյի, ասում էյի, վոր նա ճիշտ ա: Նա ինձ խրատ
եր տալի կոլխողը քանդելու աշխատանքներ տանել:

ՍԱՐԳԻՍ.— Հիմի տեսնում ես՝ կուլակը վճնց գիտի իր բանը,
նրա մտտիկ մարդը դու յես, նա քեզ անցյալում բան
ու ման է տվել, բայց դու չես հասկացել, թե ինչքան
եկ ոգտվել է քո քամակից: Նա տեսնում է, վոր իր
որը մթնում է, դրա համար ել քեզ նման միամիտ
մարդ է ման դալի, վոր խաբի, խակ տերտեր ու տիրա-
ցու նրա քամակին կանգնել են ու միասին խորհուրդ
անում՝ կոլխողը քանդելու:

ՍԵՂՈ.— Մկո, ինձ մտիկ տու, յես վոր միջակ եմ է հասկացել եմ
կուլակի ոյինբազուկ յունները, ել սրանից հետո վնչ
մի չքավոր չպեաք ա կուլակին հավատա: Դու քո
կոլխողում լնվ աշխատի, դոչնո՞ղ կաց, ետոր-եգուց մենք
եկ նոր, յերկրորդ կոլխողն ենք կազմելու, ահա են
վախար կուլակը ինքնիրեն կվերանա մեջտեղից:

ՍԱՐԳԻՍ.— Դե, անցնենք գործի (գնում է):

ՄԿՈ.— (Սեղոյին) Յես գնում եմ, հիմի վուազ գործ ունեմ, ելի
կգամ քեզ մոտ (գնում է):

ՍԵՂՈ.— (Կանչում է Մարոյին) Աղջի, Մարո, Մարո, արի ես-
տեղ:

ՄԱՐՈ.— (Թեկիեր վեր քաշած, փետր սորած է) Ի՞նչ ա, ապեր:

ՍԵՂՈ.— Մարո ջան, եգուցվանից դու յեյ գնա լիկկայան գիր ու
կարգալ սովորելու...

ՄԱՐՈ.— (Ջարմացած) Եղ ի՞նչ ես ասում, դրո՞ւստ, հանաք չե՞ս
անում...

ՍԵՂՈ.— (Լուրջ) Ի՞նչ հանաքի վախտ ա, գնա բան սովորիր. հա,
չմոռանամ, մեկ-մեկ ել գնա կինբաժին աշխարքից
խաբարներ առնելու. (վեր է կենում ու գնում ուրախ
ու հաղթական ֆայլերով, մրմրում քի օակից) ուժը:

միութեան մեջն ա, մեր կրօնը պետք ա ըլի գիտութեանը...

ՄԱՐՈ.—(Մեկնակ) Ես ի՞նչ արե եր՝ ծագեց, սովեթի արեը, մարզի արեը... գնամ, նանիին ասեմ ես նոր խտրարը (ուրախ ցատկելով վազում ե դուրս):

2. Պ Ա Տ Կ Ե Ր

(Տասը տարեկանից բարձր յերկսեռ գյուղացիներ անցուդարձ են անում կենտ-կենտ, զույգեր ել են լինում խոսակցելով. վոմանց ձեռքում շիշ, նավթաման, վորը մեշոկ շայկած, վորը զորքեր ու թերթեր ձեռքում: Մկոն ու տերտերը հակառակ կողմից զայլիս են յեվ հանդիպում իրար. տերտերը չի նկատում Մկոյին: Տերտերը հարբած ե ու որորվելով գնում ե):

Մկո.—Բարե՛, տերտեր, քեֆդ լավ ա երևում, ելի գործդ կարգին ա:

ՀՈՒՍԻԿ.—(Հազիվ նանայելով կանգ ե առնում) Հա՛, Մկո, դա՛ւ չես, եդ վճրտեղից... Քեֆդ վճնց ա:

Մկո.—Լավ ա, լավ, քոնն ել ա լավ...

ՀՈՒՍԻԿ.—Ինչի՞ համար չըլի, աշխարհը փուչ ա, ես երկու որվա աշխարհում պետք ա քեֆ անել, ուսել ու խմել, սիրել ու սիրվել... Կանքը երազ ա, մարդը... Ինքը արարելն ա (յեղզում ե) տարածւմ, տարածւմ...

Մկո.—(Հեզմանով) Գնա՛, գնա՛ տուն, վոնց վոր երևում ա, ետը քո չսիրած սատանեն փորդ ա մտել ու քեդ փիլիսոփա դարձրել:

ՀՈՒՍԻԿ.—Մենք գործ չունենք սատանաների հետ, մեր գործը առանց թևերի յերկոտանի հրեշտակների հետ ա, դժոխքն ել դրսխտն ել ես յերկրումն են. (իճճիքեճ) տէր, մեղա՛ քեդ տէր... (Դնում ե, Մկոն նրա յետելից նայում ե, գայիս ե Սեդոն):

ՍԵՂՈ.—(Զարմացած նայում ե Մկոյին) Ա՛յ մարդ, ինչի՞ չես կանգնած նայում, ի՞նչ կա:

Մկո.—Ա՛յ, Սեղո ջան, նայում եմ տերտերի յետևից, պատեպատ ա գնում, հարբած ա, ի՞նչ բաներ խոսաց ինձ, ել իր

խաչն ու խաչվառը մոռացել աս, հարբած ժամանակ
կրօնի կեղծիքը ինքն աս բաց անում, մի լսեյի՛ր՝ ին-
չե՛ր ասացի:

Մե՛րՈ.— (Նստում է մի քարի վրա) Վո՛նց վոր երևում աս, Համոյին
դոնադ եր գնացել. նա Համոյի կնկա վրեն վաղուց աս
աչք գրել՝ հըլա նիկոլի ժամանակից:

ՄԿՈ.— Սեղո՛, արի ես իրիկուն քեզ հետ կինո գնանք:

Մե՛րՈ.— Արա, իսկի չեմ տեսել ինչ բան աս, մեր Պաղտոն ու Սար-
գիսը շատ են գովում, մի-մի անգամ պատմում են,
զլուխս դագ չի մտնում:

ՄԿՈ.— Մեր կոլխոզում շաբաթը մեկ անգամ ցույց են տալի,
բայց ես իրիկուն մեծ կինո կա, ել Ամերիկայից,
Հնդստանից, Չինամաչինից, Ստամբուլից... Քաղաք-
ներ, գյուղեր, ել հին ու նոր պատերազմ, ել Հոկ-
տեմբերյան հեղափոխություն...

Մե՛րՈ.— Հը՛, իշտա եդ վերջինը, Հոկտեմբերինը տենանք վոնց աս
ըլել, եդ լաման բան կըլի, վոնց վոր մեր տղերքն են
ասում, շատ լավն աս:

ՄԿՈ.— Հըլա քիչ ասացի, ես աշխարհում ինչ վոր կա, բոլորն ել
ցույց են տալի. պետք աս միշտ գնաս, վոր տենաս:

Մե՛րՈ.— Զարմանահրանշ բան, եդ վո՛նց են ցույց տալի, ինսանի
ձեռից բան չի ազատվում:

ՄԿՈ.— Ա՛յ քեզ ասեմ. ցույց են տալի Ամերիկայի գեղացոց աշ-
խատանքը, վոր կատարում են նոր տեսակի գործիք-
ներով ու քիմիական միջոցներով. իսկ մենք մինչև
հիմի տերտերների ու սուտ խաչ ու խաչվառների վրա
հույս ենք դնում ու միշտ քաղցած մնում:

Մե՛րՈ.— Մտիկ տո՛ւ, մենք եզուց պետք աս անաստված միու-
թյան անգամ գրվենք:

ՄԿՈ.— Գրվենք, կրոնը թուլն աս:

Մե՛րՈ.— Մկո՛, թատրոն վոր ասում են, հենց եդ կինոն աս վոր
կա, հմ:

ՄԿՈ.— Զե, թատրոնը ուրիշ աս, ասենք մեկը մեկելի ախպերն աս:

Մե՛րՈ.— (Վոզգովորվելով) Գնանք, ինչ ուզում աս ըլի, գնանք...

(Այդ միջոցին մի տղա գալիս է պատին կայցնում մի մեծ հայտարարություն յեղ գնում, հետո գալիս է յերկրորդը յեղ նույնպէս կայցնում մի այլ գույնի հայտարարություն ու գնում. Սեզոն նայում է ու դառնում Մկոյինն) *Եդ. Բնչ ա վոր կայցնում են պատին. սյ, տեսնում ես կարգալ չիմանալը, տխմախի պես իրար երես ենք մտիկ տալի. յես լսով արեցի, շատ լավ արեցի...*

ՄԿՈ.—(Չարմացած) *Ի՞նչ արեցիր, սյ մարդ, եդ Բնչ ես ասում:*
ՍԵՅՈ.—*Մեր Մարտիկն հրաման տվեցի գնալու լիկկալան կարգալ սովորելու. մերը չեր թողում, յես ել մոր հետ մի լավ կալիցի, դուքս հկա: Ահա, թղթեր են կայցրել, դե կարգան տեսամ. չե՞ս կարա, ել վճնց իմանանք ես աշխրքի գործերից. չե, յես ել եմ գնալու լիկկալան, հըլս ջանս առողջ ա ու սիրտս ջահել: (Այդ միջոցին դրսից լսվում է դիոյ-գուռնայի ձեն) Ես Բնչ ա, գնանք տեսանք (գնում են) քե չե, դիոյ-գուռնի ձենը դադարում է):*

Է. Պ Ա Տ Կ Ե Ր

(Վարագույրը իջնում է ու բարձրանում. գալիս են 15—20 կոմյերիտականներ, 15—20 գյուղացի հասակավոր մարդիկ, յերկսեռ, միքանի պիոներներ, բոլորի ուսերին բահ ու բրիչ, նրանց ղեկավարում է Սարգիսը. այդ ժամանակ Վարդուշը լուսամտից դիտում է նրանց):

ՍԱՐԳԻՍ.—(Բարձր տեղ կանգնած) *Ընկերներ, դիտութլուեն ու աշխատանքը մեր բարեկամներն են, իսկ կրոնն ու տգիտութլուեն՝ մեր թշնամիները. նոր գյուղի կառուցման գործում մենք պետք է մեր աշխատանքի մեծ բաժինը նվիրենք. կեցցե՛ն աշխատանքը, կեցցե՛ն կուլտուղ շարժումը... Դեպի համատարած...*

ԲՈՂՈՐԸ.—*Կեցցե՛, ուռա՛ (ծափահարում են):*

ՍԱՐԳԻՍ.—*Կեցցե՛ն անաստվածների միութլուեն:*

ԲՈՂՈՐԸ.—*Ուռա՛...*

ՍԱՐԳԻՍ.—*Կորչի՛ կրոնը:*

ԲՈՂՈՐԸ.—*Կորչի՛ (ծափահարում են):*


ՍԱՐԳԻՍ.— Դե ուրիմն, զնանք աշխատանք տանենք, հինը, անպետքը քանդենք, նոր գլուղը կառնուցենք:

ԲՈՒՈՐԸ.— Գնանք, զնանք (շարժով գնում են՝ յերգելով Ինճերնացիոնալը):

ՎԱՐԳՈՒՇ.— (Վոգեվորված) Դրո՛ւստ վոր ուղիղ ճամպեն եդ ա, Սարգսի ճամպեն... Աղոթքը սո՛ւտ ա, խելքի հունարն ա անում ամեն բան: (Պոռում ե նրանց յեսեվից շա՛ս բարձր յեվ աղաչանով) Սպասեք, լես ել եմ գալի ձեղ հետ (առնում ե մի բան ուսն ու վազում). գալիս եմ, սպասեք... Անաստվածներ, դեպի համատարած...:

ՎԱՐԱԳՈՒՅՐ





ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ



ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ



220038673

(154)

A $\frac{11}{32673}$

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. (1³/₄ մամուլ)



Վ. Կատանյան

Победа колхоза

Госиздат ССР Армении
Эривань—1930